ՀՏԴ՝ 65(072):378,21

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Սահակյան Լ.Ա.[1], Սահակյան Ա.Լ.[2]
[1]ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի քիմիայի ամբիոն
[2]ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության խմբագրություն

Ստացված է՝ 04.03.2021, գրախոսված է՝ 05.04.2021, ընդունված է՝ 12.04.2021

Բանալի բառեր՝ *գիտություն, կրթություն, բարեփոխում, արդիականացում, Բոլոնիայի համաձայնագիր, ազգային առանձնահատկություններ, հարացույց, հայեցակարգ:*

Հոդվածում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից կրթության զարգացման՝ XX դարի վերջի և XXI դարի սկզբի կրթական բարեփոխումների միտումները: Արձանագրվում է Բոլոնիայի համաձայնագրի դրույթների բացասական ազդեցությունը հայրենական կրթության վրա, որոնք իրականացվում են՝ առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները և ձևավորված կրթական ավանդույթները: Բազմաթիվ կրթական բարեփոխումների հետաձգված արդյունքը, որը հանգեցնում է մասնագետների պատրաստման գործում հիմնարար գիտությունների դերի կրճատման, դեռևս պետք է գնահատվի:

Ժամանակակից քաղաքակրթության զարգացումն ուղղակիորեն կապված է կրթության զարգացման հետ, որի համաշխարհային համակարգն այժմ ճգնաժամային վիճակում է: Այդ մասին են վկայում կրթության որակի նվազումը, խզումը գիտության, մշակույթի, կրթության միջև [4]: Նման իրավիճակում փորձ է արվում գտնելու կրթության նոր հարացույց: Ավելի ճիշտ՝ հասարակության ներկան և ապագան որոշող կրթության բարեփոխում:

Ժամանակակից փուլում կրթության նկատմամբ առկա են երկու հակադիր հայեցակարգային դիրքորոշումներ, որոնց միջև շարժուն հավասարակշռությունը կարող է խթանել որակյալ կրթության զարգացումը, իսկ անհավասարակշռությունը կարող է հանգեցնել որպես մարդկային պաշարների և պետության աշխատանքային ներուժի գեներացման աղբյուրի՝ կրթության քայքայման:

Առաջին դիրքորոշումը երկար ժամանակ ավանդական էր Հայաստանի Հանրապետությունում և հիմնված էր այն մտայնության վրա, որ կրթությունը հանրային բարիք է, ոչ տնտեսական ոլորտ, հատուկ սոցիալական ինստիտուտ, որտեղ ձեռք են բերվում առավելապես սոցիալական արդյունքներ: Հետևաբար ակնկալվում և իրականացվում էր պետության ֆինանսական աջակցություն, իսկ շուկայական մեխանիզմներում՝ մրցակցություն կրթության ոլորտում, այդ թվում՝ բարձրագույն, և ֆինանսավորման այլընտրանքային միջոցների մասին հարցեր չէին առաջանում:

Երկրորդ դիրքորոշումը՝ պայմանավորված կրթական մեխանիզմների ներդրմամբ, սկսեց առաջնահերթություն ստանալ: Կրթական համակարգի վրա շուկայի ազդեցությունը և որոշ պետական նախաձեռնությունների իրականացումը հանգեցրել են այն բանին, որ կրթական հաստատություններում սկսել են տարածվել առևտրային կազմակերպություններին բնորոշ խաղի կանոնները: Կրթական հաստատությունները բախվում են ֆինանսավորման միջոցներ հայթայթելու անհրաժեշտությանը՝ մշակելով և իրականացնելով մրցունակ կրթական ծրագրեր, կիրառելով ուսուցման նոր մոտեցումներ, մարքեթինգային գործիքներ: Կրթական ծառայությունների շուկայում առաջացավ խիստ մրցակցություն ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական բուհերի միջև, սկսեցին քննարկվել տարատեսակ խնդիրներ, օրինակ՝ կրթական ծառայությունների ապրանքների կատեգորիային պատկանելու հարցը: Կա տեսակետ, որ բուհերը աշխատաշուկայի սուբյեկտներ են, որոնք իրենց արտադրանքը շրջանավարտների միջոցով արտահանում են շուկա [3]:

Ժամանակակից բուհը դիտվում է նաև որպես կրթական ծառայությունների և գիտական հետազոտությունների շուկաների սուբյեկտ: Հետազոտողների մեծ մասը կարծում է, որ բուհի արտադրանքը կրթական ծառայություններն են, իսկ շրջանավարտի որակավորումը պայմանավորված է ոչ միայն բուհով, այլև կրթության գործընթացում հենց շրջանավարտի ներդրումով: Այսպիսով, բարձրագույն մասնագիտական կրթության հաստատությունները պետք է լուծեն մարդկային պաշարների զարգացման

* ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ

Լ.Ա. Սահակյան
ԵՊԲՀ, դեղագիտական ֆակուլտետի քիմիայի ամբիոն
Հասցե՝ *ՀՀ, Երևան, 0025,Կորյունի 2*
Էլ. փոստ՝ *lidasaakyan7@gmail.com*
Հեռ.՝ *(+374) 94 06 08 60*

սոցիալական առաքելության կատարման և գոյատևման, ինքնազարգացման համար ֆինանսատնտեսական արդյունքների ստացման միջև հավասարակշռություն ապահովելու խնդիրը: Հայտնի է, որ 10-11-րդ դասարաններում սովորողների և նրանց ծնողների շուրջ 70%-ը կատարում է ընտրություն՝ ըստ ուսումնական հաստատության վերաբերյալ ստեղծված դրական վարկանիշի (հասարակական կարծիք, հեղինակություն, վստահություն և դրական փորձի ձևավորում):

Ներկայումս առավել արդիական հիմնախնդիրներից մեկը կրթության բարեփոխումն է, որը կատարվում է կրթության պատասխանատուների նախաձեռնությամբ: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը 2000 թվականից բռնել է հիմնարար բարեփոխումների ուղին: 2012թ. ավարտուն տեսք է ստացել 12-ամյա կրթական համակարգի բովանդակային դաշտը, որը ներառում է դասավանդման համապատասխան մեթոդաբանության մշակում՝ ըստ բարեփոխված դպրոցի կրթական նոր աստիճանների և դրանց հաջորդական փուլերի: Կրթական համակարգը հայտնվել է զարգացման մի փուլում, երբ փորձ է արվում աշխարհի կրթական մարտահրավերների և ազգային առանձնահատկությունների համադրմամբ ստեղծել նոր կրթական միջավայր: Կրթական հարացույցը փոխարկվել է մանկավարժական նոր տեխնոլոգիաների, որոնք ուղղված են ոչ թե գիտելիքի գերակայությանը, այլ մասնագետների պատրաստման անհատական ստեղծագործական տեսակներին ու մեթոդներին [2]:

Այս դեպքում չափազանց կարևորվում է այն էական շեշտադրումը, որ Հայաստանում շատերը համոզված են, թե անընդհատ և ոչ միշտ հասկացված փոփոխությունները միայն հայրենական կրթության ազգային առանձնահատկությունն են, ուստի անընդհատ պարսավում են բարեփոխումները նախաձեռնած անձանց և հատկապես կրթության պատասխանատուներին: Բայց դա թյուրըմբռնում է: Բարեփոխումները կամ վերակառուցումները որոշակի պարբերականությամբ կատարվում են բոլոր երկրների միջին և բարձրագույն դպրոցներում: Եվ ոչ մի անսպասելի բան այս դեպքում չկա: Կյանքն ամենուր առաջ է ընթանում, նոր սերունդն առաջադրում է նոր պահանջներ, փոխվում են հասարակական կարծիքը և մարդկանց արժեհամակարգը: Անխուսափելիորեն անհրաժեշտ է լինում ընտրել կրթության առաջատարներ և կողմնորոշիչներ, կատարելագործել ուսուցման բովանդակությունը, կազմակերպումն ու մեթոդաբանությունը:

Կրթությունը պետք է ձևավորի ստեղծագործող անհատ, և այսօրվա առավել արդիական հիմնախնդիրներից մեկը կրթության բարեփոխումն է: Բայց բարեփոխումները, որոնք կատարվել և կատարվում են ներկայումս, ունեն մի շարք թերություններ: Առաջին հերթին ձևակերպված չէ նպատակը: Հասարակությունը չի հասկանում, թե դեպի ուր է ուղղված բարեփոխումների վեկտորը, և որոնք են բարեփոխումների վերջնական նպատակները [1]:

Հայաստանի Հանրապետությունում արդեն մոտ 20 տարի ընթանում է կրթության բարեփոխում: Այս գործընթացի տևողության փաստն ինքնին մի կողմից վկայում է սոցիալական համակարգի բարեփոխվող օբյեկտի բարդության մասին, մյուս կողմից՝ ստիպում է մտածել այն մասին, թե որքանով են մտածված տվյալ բարեփոխման որոշ քայլեր, եթե դրանց նպատակները մինչև վերջ պարզ չեն, իսկ բացասական հետևանքներն արդեն շոշափելի են:

Ըստ Վ.Ա. Պոպկովի բնորոշման՝ «Կրթության համակարգի բարեփոխումն այնքան է ձգձգվել, որ դպրոցների բազմաթիվ աշակերտների համար իրենց ուսուցման բոլոր տարիներն անցել են անկայուն և անընդհատ փոփոխվող համակարգի ներսում» [6]:

Երևի թե պետք է փնտրել մի ձևակերպում, որ յուրաքանչյուրին պարզ լինեն կրթության նպատակն ու իմաստը, ինչ՞ն ենք մենք ձգտում, ինչպե՞ս բարեփոխենք միջնակարգ և բարձրագույն դպրոցը:

Կրթության բարեփոխումները դժվարագույն, համաժողովրդական հիմնախնդիրներ են: Իսկ ի՞նչ բարեփոխում է անհրաժեշտ կրթությանը: Ցավոք, բոլորը փաստում են, որ խորհրդային դպրոցի համեմատ ժամանակակից դպրոցի մակարդակն ավելի ցածր է:

Դ.Ս. Չերչիմցևը իր «Կրթական համակարգի բարեփոխումները սոցիալական քաղաքականության համատեքստում» հոդվածում նշում է. «Ներկայիս միտումների հետագա զարգացումը կարող է հանգեցնել պետության ողբերգության. այսօր գործնականում այն ամենը, ինչ դեռ պահպանվում է երկրում, պահպանվում է սոցիալիզմի ժամանակ մեծացած սերունդների ուսերին: Այդ մարդկանց քանակն ավելի ու ավելի է քչանում, իսկ նոր կյանք են մտնում ոչ բավարար գործունակ սերունդները» [11]:

Գիտելիքի հեղինակությունը հասարակության մեջ ընկել է:

Եվ այսպես, կարելի է արձանագրել, որ հայրենական կրթության մեջ նկատվում են մի շարք ճգնաժամային երևույթներ՝ պայմանավորված բարեփոխումների ճիշտ ուղու բացակայությամբ:

Եվրոպական և միջազգային միջինացված

նորմերի և կրթական միջավայրի կազմակերպման սկզբունքների ընդօրինակումը չի համապատասխանում ոչ կրթության ազգային-մշակութային առանձնահատկություններին, ոչ էլ գործունեության տարբեր տեսակների մասնագետների ձևավորման ոլորտային չափանիշներին՝ անքննելի իրավասություններ, կրթական ծրագրերի կրճատում՝ երկաստիճան ուսուցմանն անցնելու նպատակով, հայրենական կրթության ազգային-պատմական առանձնահատկությունների ըմբռնման բացակայություն, վաղ արհեստավարժության, մասնագիտական կողմնորոշման համակարգի անբավարար զարգացում, որակի բյուրոկրատական կառավարման կրկնօրինակող ուրվագծեր. սրանք են ժամանակակից իրողություններն ու խնդիրները, որոնց հաղթահարմամբ էլ պայմանավորված են կրթության կատարելագործման և առողջացման ուղիները [5]:

Հաջորդ խնդիրն ուսուցչի, դասախոսի հեղինակությունն է:

Եթե ուսուցչի մասնագիտությունը դառնա առավել հեղինակավոր, հարգվող մասնագիտություններից մեկը, միանգամից կմեծանա կրթության որակը:

Պաշտոնապես հռչակվել է երկրում մշակութային կյանքի լիակատար ազատություն, իսկ իրականում կտրուկ նվազել է բնակչության հոսքը մշակութային հաստատություններ՝ գրադարաններ, թանգարաններ, թատրոններ, ցուցասրահներ և այլն: Ընդհանուր առմամբ, ձևավորվել են քաղաքացիների ժամանցի կառուցվածքի տարբեր ճաշակներ, կատարվել է «ընտելացում»: Պատկերավոր ասած՝ հասարակությունը «նստել է հեռուստաէկրանի առջև»: Ազատ ժամանակ հասարակության մոտ 60%-ը նախընտրում է տանը հեռուստացույց դիտել: Հեռուստատեսությունը բացարձակ գերիշխում է երկրի բնակիչների ժամանցի կառուցվածքում ինչպես հեռուստածրագրերի դիտման համար ծախսված ժամանակով, այնպես էլ հեռուստացույցների էկրանների մոտ տեղ զբաղեցնող մարդկանց քանակով: Տարբեր հետազոտությունների տվյալներով հեռուստատեսության լսարանի մեծությունը (արտահայտված ընդգրկվածության ցուցանիշներով՝ հեռուստացույց միացրած մարդկանց քանակը) միջինում օրական տատանվում է բնակչության 75-80 տոկոսի միջակայքում:

Ավելի էական է մեկ այլ բան. երիտասարդությանը նախորդ սերունդների արմատական մշակութային անջրպետ է պարտադրվել: Մեզանում կարծես թե մարում է հիմնախնդրին պատմականորեն մոտենալը: Եթե մենք չհետաքրքրվենք անցյալի ձեռքբերումներով, չենք կարող առաջընթաց ապահովել և դատապարտված կլինենք սահելու մակերեսին:

Կրթական հաստատությունների տնտեսական ինքնուրույնության ընդլայնումը ղեկավարության առջև մշտական հոգածության խնդիր է առաջադրում հաստատության գործունեության շահութաբերությունը մեծացնելու առումով, որը ստիպում է նվազեցնել այն բոլոր ուղղությունները, որոնք անմիջական շահույթ չեն ապահովում, և փնտրել ցանկացած, հաճախ անհեթեթ և ոչ օրինական լրացուցիչ վաստակ:

Վճարովի ուսուցումը իրականացվում է այն մասնագիտություններով, որոնք տվյալ հանգամանքներում ներկայացվում են որպես առավելագույն եկամուտներ ապահովելու ունակ: Դա դարձել է մենեջմենթի, տնտեսության, իրավագիտության և այլ ոլորտներում կրթություն ստացած երիտասարդների գործազուրկների քանակի աճի, ինչպես նաև ոչ հիմնական կրթական հաստատությունների՝ նշված ուղղություններով ոչ պատշաճ որակի կրթական ծառայություններ մատուցող «մեկօրյա» հաստատությունների քանակի աճի հիմնական գործոններից մեկը:

Մեր օրերում պահանջված գիտելիքը և՛ բնական, և՛ տեխնիկական գիտություններում, հատկապես սոցիալ-հումանիտար ոլորտում ամբողջական համակարգ չէ: Գիտական հարացույցների փոփոխությունը և ընդլայնվող հայեցակարգային բազմակարծությունը հանգեցրել են իրարամերժ և հավասարապես ոչ ամբողջությամբ ապացուցված գիտական հասկացությունների համատեղ գոյությանը մեկ առարկայի շրջանակներում՝ նվազեցնելով գիտելիքի իսկությունը:

Հետագայում «բարեփոխում» եզրույթը փոխարինվել է «արդիականացում» եզրույթով, որը հնարավորություն է տվել բարեփոխումների հեղինակներին գործելու ավելի լայն մոդելի շրջանակներում: Բարեփոխումը հասարակական կյանքի որևէ կողմի վերափոխման, վերակազմավորման փոփոխությունն է, որը չի ոչնչացնում գոյություն ունեցող կառույցի հիմքերը, մինչդեռ արդիականացումը փոփոխություն է, կատարելագործում, որը համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Տարբերությունները, ինչպես երևում է, առաջին հերթին մասշտաբային են: Արդիականացումը ենթադրում է բարեփոխումների համակարգ, որի վերջնական նպատակը զարգացած երկրների օրինակով ժամանակակից արդյունաբերական հասարակության կառուցումն է՝ հաշվի չառնելով սեփական երկրի մշակութային ավանդույթները [8]:

Մեկ այլ գործոն, որն իր շտկումներն է մտցնում կրթության բարեփոխումների մեջ, «գլոբալացումն» է:

Գլոբալացման գործընթացը բնականաբար ներառում է ոչ միայն գործունեության արտադրական ոլորտը, այլև մշակութային արժեքները, սոցիալական ոլորտը: Բացառություն չէ նաև կրթությունը:

Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում Կրթության կառուցվածքային փոփոխությունների սկիզբը, որն անցկացվում էր գլոբալացման նպատակով, շատ առումներով դրված էր 50-ականների երկրորդ կեսին՝ որպես Խորհրդային Միության կողմից նետվող մարտահրավերների պատասխան: «Խորհրդային Միության կողմից մեզ նետված մարտահրավերների լրջությունը,- 1957-ին հայտարարել է ամերիկյան ատոմային սուզանավի «հայրը»՝ ծովակալ Հ. Ռիկովերը,- ոչ թե այն է, որ նա մեզանից ուժեղ է ռազմական առումով, այլ այն, որ նա սպառնում է մեզ իր կրթական համակարգով» [9]:

Բոլոնիայի գործընթացն ուղղված է մերձեցմանը, և ոչ թե Եվրոպայում բարձրագույն կրթության «ստանդարտացմանը» կամ «միասնականացմանը» և խոր հարգանք է դրսևորվում ինքնավարության և բազմազանության հիմնարար սկզբունքների նկատմամբ: Բոլոնիայի հռչակագիրն ընդգծում է «տարբեր մշակույթների, լեզուների, ազգային կրթական համակարգի և համալսարանական ինքնավարության» ընդունումը [9]: Հետևաբար Սովետական Միության կազմում եղած հանրապետությունները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը կարող էին մտնել Բոլոնյան գործընթացի մեջ՝ ոչ թե ոչնչացնելով իրենց կրթությունը, այլ զարգացնելով այն՝ հաշվի առնելով իրենց ինքնությունը: Ինչպես Ռուսաստանի ռեկտորների 7-րդ համագումարում ասել է Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր Վ. Ա. Սադովնիչին, «...միջազգային կրթական տարածք Ռուսաստանի կրթական համակարգի ինտեգրման հակառակորդներ չկան: Բայց դրա իրականացման մոտեցումների տարբերություն կա»: Եվ հետո հաջորդում է առանցքային արտահայտությունը, որին, մեր կարծիքով, չի կարելի չհամաձայնել. «...Մենք կարող ենք ոչ պակաս համառորեն գործընկերներին առաջարկել մեր փորձը: Մենք պետք է պաշտպանենք Ռուսաստանի կրթական համակարգի շահերը»: Կարելի է ասել, որ Սադովնիչիի այս ձևակերպումը Կ. Դ. Ուշինսկու մտքի շարունակությունն են. «Չի կարելի ապրել մեկ այլ ժողովրդի օրինակով, որքան էլ այն գայթակղիչ լինի» [7, 10]:

Այսպիսով, որքան էլ Հայաստանը Բոլոնիայի համաձայնագրի մաս է կազմել, այնուհանդերձ, կրթության ասպարեզում պետք է հրաժարվել պարտադրանքներից և սխեմաներից, առաջարկել սեփական հայեցադրույթներն ու սկզբունքները՝ կրթությունը դարձնելով նպատակային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սահակյան Լ.Ա. Կրթության փիլիսոփայությունը և ժամանակակից բարեփոխումների հիմնախնդիրները, «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու,Եր., Զանգակ, 2015.Էջ181-184:
2. Давыдов Ю.С. Болонский процесс и российские реалии.М.: Московский психолого-социальный институт, 2004, 136 с.
3. Ефремова Н.В., Белогорцева И.Е., Зейналбдыев И.Е. Проблемы перехода российской федерации на болонскую систему образования: Профессиональное образование в России и за рубежом, 4(24) 2016, с. 66-68
4. Запесоцкий А.П. Философия образования и проблемы современных реформ. Журнальный клуб Интелрос, Вестник Российского философского общества, № 3, 2012, с. 64-72
5. Оленев С.М. Современные реформы образования в России: контекст, проблемы и перспективы ISSN 1997-0803. Вестник МГУКИ, 2012, 6(50) ноябрь-декабрь
6. Попков В.А., Матюшин А.А. (2015). Реформа российского образования: мифы и реальность, КиберЛенинка: https://cyberleninka.ru/article/n/sovremennye-reformy-obrazovaniya-v-rossii-kontekst-problemy-i-perspektivy.
7. Садовничий В.А. Размышления о Болонском процессе: Доклад на II Международном семинаре «Россия и европейское пространство высшего образования: планы и перспективы после Берлинской конференции», 29-30 октября, 2003, Санкт-Петербург
8. Совместная Декларация европейских министров образования, Режим доступа: http://www.rusmagistr.ru/page_0002/page_0026/page_0042/
9. Трубецкой С.Н. Московский Университет на пороге третьего тысячелетия. М.: Изд. Московского университета, 1996, 148 с. (Справочно-информационная серия; Вып. 12)
10. Ушинский К.Д. О народности в общественном воспитании // Собр. соч. в 11 т., М.; Л.: Изд. Академии педагогических наук, 1948, т. 2.: Педагогические статьи, 1857-1861 гг., с. 69-166
11. Черчимцева Д.С. Реформа образовательной системы России в контексте социальной политики, Вестник СГТУ, Саратов: т. 4, № 1(42), 2009, с. 304-309

РЕЗЮМЕ

РЕФОРМЫ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ

Саакян Л.А.[1], Саакян А.Л.[2]
[1]ЕГМУ, Кафедра химии фармацевтического факультета
[2]Издательство «Гитутюн» НАН РА

Ключевые слова: *наука, образование, культура, реформа, модернизация, Болонское соглашение, национальные особенности, парадигма, концепция.*

Развитие современной цивилизации напрямую связано с развитием образования, мировая система которого переживает кризис. Об этом свидетельствует снижение качества образования, разрыв между наукой, культурой и образованием. В такой ситуации делается попытка найти новую парадигму образования, точнее, реформу образования, определяющую настоящее и будущее общества. На современном этапе существует два противоположных концептуальных отношения к образованию, между которыми равновесный баланс может стимулировать развитие качественного образования, а дисбаланс может привести к распаду образования как источника человеческих ресурсов и создания рабочего потенциала государства.

SUMMARY

EDUCATION SYSTEM REFORMS

Sahakyan L.A.[1], Sahakyan A.L.[2]
[1]YSMU, Department of Chemistry of Faculty of Pharmacy
[2] "Gitutyun" Publishing House of NAS RA

Keywords: *science, education, culture, reform, modernization, Bologna agreement, national characteristics, paradigm, concept.*

The development of modern civilizations is closely linked to the development of education, the world system of which is experiencing a crisis. This is evidenced by the decline in the quality of education, the gap between science, culture and education. In such a situation, an attempt is made to find a new paradigm of education, more precisely, an education reform that determines the present and future of society. At the present stage, there are two opposite conceptual attitudes towards education, between which an equilibrium balance can stimulate the development of quality education, and an imbalance can lead to the breakdown of education.